ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻՆՏԵԼԵԿՏԻ ԵՎ ԿԱՄՔԻ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ

ԱՎԱԳՅԱՆ ԱՆԻ
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան
էլ. հասցե՝ avagyanani24@aspu.am

DOI: 10.24234/scientific.v1i46.141

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի նպատակն է բացահայտել ինտելեկտի և կամքի ուժի համահարաբերակցության առանձնահատկություններն անձի զարգացման տարբեր փուլերում: Հոդվածում ներկայացված են անձի զարգացման երեք հաջորդական փուլերում ինտելեկտի և կամքի փոխպայմանավորվածության ուսումնասիրությանն ուղղված հետազոտության արդյունքները: Կատարվել է կորելյացիոն վերլուծություն, ինչի արդյունքում ինտելեկտի և կամքի փոխկապակցվածության մասին վկայող նշանակալի տվյալներ են ստացվել:

Պարզվել է, որ ինտելեկտը անձնավորության կամքի ուժի կարգավորող գործառույթ ունի: Անձի զարգացման տարբեր փուլերում, կախված տվյալ փուլում առկա խնդիրներից, կամքի ուժը առավել ակտուալ է դառնում, և ակտուալացված հատկությունների նկատմամբ ինտելեկտի կարգավորող գործառույթը մեծանում է:

Բանալի բառեր: ինտելեկտ, կամքի ուժ, հարմարում, անձնավորություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Փոխակերպվող հասարակության պայմաններում անձնավորությունն անընդհատ ստիպված է ադապտացվել կատարվող փոփոխություններին և նրա ինտելեկտի, և անձնային հատկությունների դրսևորումներին որակապես նոր պահանջներ են առաջադրվում: Սոցիալական միջավայրին հարմարման և անձի ինքնադրսևորման ու ինքնահիրացման տեսանկյունից հատկապես կարևորվում է ինչպես անձի ինտելեկտուալ և անձնային հատկությունների, այնպես էլ դրանց համահարաբերակցման ուսումնասիրման հիմնախնդիրը:

Մարդկային ինտելեկտի հիմնահարցը նոր չէ, այն վաղուց ի վեր արժանացել է հոգեբանների, մանկավարժների և մի շարք այլ բնագավառների մասնագետների ուշադրությանը: Ինտելեկտի՝ որպես ինքնուրույն երևույթի դիտարկման հիմնական պատճառը նրա դերն է մարդու վարքի կարգավորման գործում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են ծառայել Ռ.Ֆ. Լոմովի, Վ.Դ.Շադրիկովի, Վ.Վ Դրուժինինի համակարգային մոտեցումը, Պ.Կ Անոխինի՝ ֆունկցիոնալ համակարգերի տեսությունը, անձի ձևավորման և զարգացման Բ.Գ. Անանևի տեսությունը, ինտելեկտի ընդհանուր և մասնակի գործոնների Զ. Սպիրմենի տեսությունը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ինտելեկտը, ինչպես ենթադրում է Վ.Շտեռնը (Дружинин В. Н., 1999), կյանքի նոր պայմաններին հարմարվելու որոշակի ընդհանուր ընդունակություն է: Հարմարման գործընթացը, որը ըստ Յա. Ա. Պոնոմարյովի, կենսական խնդիրների լուծումն է, իրականացվում է «գործունեության ներքին պլանում (մտքում)»: Դրա շնորհիվ սուբյեկտը կարողանում է մտքում որոշ խնդիրներ լուծել, առանց նախնական փորձարկման (Пономарев Я. А.,1988): Ըստ Պոլանիի, ինտելեկտը գիտելիքներ ձեռք բերելու միջոցներից մեկն է (Полани Л., 1986):

Ցանկացած ինտելեկտուալ գործողություն ենթադրում է սուբյեկտի ակտիվություն և գործողության կատարման ժամանակ ինքնակառավարման առկայություն: Ըստ Մ.Կ. Ակիմովայի՝ ինտելեկտի հիմքը մտավոր ակտիվությունն է, իսկ ինքնակառավարումը ընդամենը ակտիվության՝ խնդրի լուծման համար անհրաժեշտ մակարդակ է ապահովում (Акимова М. К., 1977): Այս տեսակետին է հանգում նաև Է. Ա. Գոլուբևան, որը ենթադրում է, որ ակտիվությունն ու ինքնակառավարումը, ինչպես նաև աշխատունակությունը, ինտելեկտուալ արդյունավետության բազային գործոններն են (Голубева Э. А., 2005):

Մենք գտնում ենք, որ ինտելեկտը ժառանգական նախադրյալների հիման վրա օնթոգենեզում զարգացող հոգեբանական ֆունկցիոնալ համակարգ է, որը դրսևորվում է, որպես անհատական հատկանիշ:

Թեև ինտելեկտի հոգեբանությունը հոգեբանական գիտության մեջ բավականին կայացած ոլորտ է, այնուամենայնիվ, ինտելեկտը սոցիալական ադապտացիայի հետ կապող կոնկրետ մեխանիզմների առումով դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ: Հենց այս տեսանկյունով է դիտարկվում ինտելեկտի և կամային հատկությունների համահարաբերակցման խնդիրը: Գործոնային տեսության շրջանակներում ևս ինտելեկտի և անձնավորության գծերի փոխկապակցվածության խնդրին վերջնական լուծում չի տրվել: Դ.Մայերսը նշում է, որ հոգեբանների ուսումնասիրություններում անձնավորության գծերի և ինտելեկտի կապը քիչ է ուսումնասիրված, եղած արդյունքներն էլ խիստ հակասական են (Маерс Д., 1997): Վ. Ն. Դրուժինինը նույնպես, վերլուծելով առկա տվյալները, եզրակացնում է, որ ինտելեկտի և անձնային հատկությունների փոխպայմանավորվածության թեման դեռևս իրեն արժանի զարգացում չի ապրել, առկա տվյալներն էլ խիստ հակասական են (Дружинин В. Н., 2005):

Անձնավորության ինտելեկտի և անձնային առանձնահատկությունների փոխպայմանավորվածության հիմնահարցն ընդգրկում է դեռևս չլուծված բազմաթիվ հոգեբանական հարցեր: Մասնավորապես, դեռևս բավարար լուծում չեն ստացել

ինտելեկտի և անձնավորության կամքի ուժի փոխպայմանավորվածությունը պարզաբանող հարցերը: Այդ անհրաժեշտությունն էլ հիմք է ծառայել մեր ուսումնասիրության թեմայի ընտրության համար:

Մեր հետազոտության նպատակն է բացահայտել ինտելեկտի և կամքի ուժի համահարաբերակցության առանձնահատկություններն անձի զարգացման տարբեր փուլերում:

Հետազոտության հիմքում ընկած է այն հիմնական վարկածը, ըստ որի՝ ինտելեկտը՝ որպես հոգեբանական ֆունկցիոնալ մետահամակարգ, ազդում է անձնային որոշակի հատկությունների, մասնավորապես կամքի ուժի դրսևորման վրա: Կամքի ուժի և ինտելեկտի համահարաբերակցությունը անձի զարգացման յուրաքանչյուր փուլում ունի դրսևորման որոշակի առանձնահատկություններ:

Հետազոտությունն անցկացվել է անձի զարգացման երեք հաջորդական խմբերում՝ 13-15 տարեկան, 17-19 տարեկան և 25-30 տարեկան: Հետազոտությանը մասնակցել են 211 հետազոտվողներ:

Հետազոտության ընթացքում օգտագործված մեթոդների և մեթոդիկաների ընտրությունը պայմանավորվել է ընտրված մեթոդաբանական հիմքերով և ուսումնասիրության առարկայով: Հետազոտության ընթացքում օգտագործվել են դիտման, հոգեբանական զրույցի, անկախ բնութագրերի ընդհանրացման մեթոդները և հետևյալ ստանդարտացված մեթոդիկաները.

1. Ջ. Ռավենի «Աստիճանաբար բարդացող աղյուսակներ» մեթոդիկան (Raven G., 1982) ինտելեկտի հետազոտման նպատակով:
2. «Կամքի ուժի թեստ» մեթոդիկան՝ ըստ Ռ. Ս. Նեմովի (Немов Р. С., 2002):

Անձի զարգացման երեք փուլերում կատարված հետազոտության արդյունքները ենթարկվել են համահարաբերակցային վերլուծության: 13–15 տարեկան հետազոտվողների հետազոտության արդյունքների համահարաբերակցային վերլուծության արդյունքում ($P \leq 0,01$) հավաստիության դրական կապ է բացահայտվել ինտելեկտի և կամքի ուժի ($r=0,796$) միջև: Կամքի ուժի հետ կապեր են բացահայտվել նաև տարիքային մյուս երկու խմբերում: 17-19 տարեկանների խմբում այդ կապն արտահայտվում է ($P \leq 0,01$) հավաստիության ($r=0,246$) ցուցիչով, իսկ 25-30 տարեկանների խմբում՝ $P \leq 0,05$ հավաստիության ($r=0,271$) ցուցիչով:

Փաստորեն պարզվում է, որ ինտելեկտն ու կամքի ուժը կայուն կապի մեջ են: Այստեղ ակնհայտ է, որ մենք գործ ունենք անձի զարգացման երեք հաջորդական փուլերում դրսևորվող դրական կայուն կապի հետ, ինչը մեզ թույլ է տալիս մտածել, որ կամային գործընթացներն առաջ են մղվում ինտելեկտի շնորհիվ: Մեր կարծիքով, այս կապը պայմանավորված է այն հանգամանքով, որ կամային որակներ դրսևորելու համար անձը պետք է որոշակի ջանքեր գործադրի, իսկ դրանք անմիջականորեն միջնորդավորվում են անձնավորության պահանջմունքներով և դրդապատճառային ոլորտով: Այսինքն, անձնավորությունը պետք է իր պահանջմունքադրդապատճառային ոլորտի համատեքստում վերլուծության ենթարկի իր կողմից կատարվող կամ

նախատեսվող գործողությունները, հասկանա դրանց բուն նպատակն ու հնարավոր արդյունքները: Փաստորեն կամային կոնկրետ ջանք գործադրելու գործընթացի և ինտելեկտուալ ակտիվության միջև ընկած են ինտելեկտուալ կոնկրետ գործընթացներ:

Պատահական չէ, որ ինտելեկտն ու կամքն անձնային եռանկյունու երկու թևերն են և միջնորդավորված են անձով: Անձնային եռանկյունու գաղափարը պատկանում է Բ. Գ. Անանևին: Նա առանձնացնում է անձի երեք հիմնական կողմերը՝ բանականություն, կամք, զգացմունքներ և անձի կառուցվածքը ներկայացնում եռանկյունու տեսքով (Ананьев Б. Г., 1996):

Մեր հետազոտության արդյունքում 13 -15 տարեկանում ինտելեկտի և կամքի ուժի միջև դրսևորվող կապը զգալիորեն ավելի ուժեղ է, քանի որ այս տարիքում իրական կամ երևակայական խնդիրները բազմազան են, հետևաբար այդ խնդիրները կառավարելու նպատակով ինտելեկտն ակտիվանում է, ինչի արդյունքում կապը մեծանում է: Կամային գործընթացներում ինտելեկտուալ օպերացիաների շնորհիվ գնահատվում է դրդապատճառներից յուրաքանչյուրը և մշակվում են նպատակին ուղղված կամային վարքի դրսևորման ձևերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության իրականացման արդյունքում կարող ենք նշել, որ՝

- ինտելեկտն ունի անձնավորության կամքի ուժի կարգավորող գործառույթ,
- կամային գործընթացներում ինտելեկտուալ օպերացիաների շնորհիվ գնահատվում է դրդապատճառներից յուրաքանչյուրը և մշակվում են նպատակին ուղղված կամային վարքի դրսևորման ձևերը,
- անձի զարգացման տարբեր փուլերում՝ կախված տվյալ փուլում առկա խնդիրներից, կամքի ուժն առավել արդիկան է և ակտուալացված հատկությունների նկատմամբ ինտելեկտի կարգավորող գործառույթը մեծանում է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ананьев Б.Г. (1996). Психология и проблемы человекознания. Избр. Пси.. Труды, Москва-Воронеж.

Акимова М.К. (1977). Интеллект и его измерение, Проблемы психологической диагностики. Таллин.

Голубева Э.А. (2005). Способности. Личность. Индивидуальность. Дубна, Феникс.

Дружинин В. Н. (1999). Психология общих способностей. Санкт-Петербург, Питер.

Дружинин В.Н. (2005). Структура психометрического интеллекта и прогноз индивидуальных достижений, Интеллект и творчество: Сб. науч. тр., РАН. Ин-т психологии, Москва.

Маерс Д. (1997). Социальная психология, Москва, Питер.

Немов Р. С. (2002). Психология. Книга 3, Москва, Владос.

Полани Л. (1986). Личностные знания. Москва, Наука.

Пономарев Я. А. (1988). Психология творчества. Тенденции развития психологической науки, Москва, Наука.

Raven G. (1982). Progressive Matrices. Psychodiagnostica, narodny rodnik, Bratislava.

REFERENCE LIST

Anan'ev B. G. (1996). Psihologiya i problemy chelovekoznaniya *(Psychology and problems of human knowledge)*. Izbr. Psi.. Trudy, Pod red. A.A. Bodaleva, Moskva-Voronezh.

Akimova M. K. (1977). Intellekt i ego izmerenie, Problemy psihologicheskoj diagnostiki *(Intelligence and its measurement, Problems of psychological Diagnostics)*. Tallin.

Golubeva E. A. (2005). Sposobnosti. Lichnost'. Individual'nost' *(Capabilities. Personality. Individuality)*. Dubna, Feniks.

Druzhinin V. N. (1999). Psihologiya obshchih sposobnostej *(Psychology of general abilities)*. Sankt-Peterburg, Piter.

Druzhinin V. N. (2005). Struktura psihometricheskogo intellekta i prognoz individual'nyh dostizhenij, Intellekt i tvorchestvo *(The structure of psychometric intelligence and the forecast of individual achievements, Intelligence and creativity)*. Sb. nauch. tr., RAN. In-t psihologii / Otv. red. A.N. Voronin, M.

Maers D. (1997). Social'naya psihologiya *(Social psychology),* Piter.

Nemov R. S. (2002). Psihologiya *(Psychology)*. Kniga 3, M., Vlados.

Polani L. (1986). Lichnostnye znaniya *(Personal knowledge)*. M., Nauka.

Ponomarev YA. A. (1988). Psihologiya tvorchestva. Tendencii razvitiya psihologicheskoj Nauki *(Psychology of creativity. Trends in the development of psychological science),* M., Nauka.

Raven G. (1982). Progressive Matrices. Psychodiagnostica, narodny rodnik, Bratislava.

ABSTRACT

THE CORRELATION PECULIARITIES OF INTELLIGENCE AND WILL-POWER OF A PERSSON IN DIFFERENT STAGES OF DEVELOPMENT

AVAGYAN A.

The purpose of the article is to reveal the characteristics of the correlation between intelligence and willpower at different stages of personality development. In the article the author reviews the specifics between intellect and will-power of the three stages of person's development. It is mentioned that connections with different level of expression have revealed between intellect and will-power. Based on those, the author makes conclusion that intellect and will-power are factors of hard connections.

Intelligence has been found to have a regulatory function in a person's willpower. At different stages of a person's development, depending on the problems at the given stage, willpower becomes more relevant, and the regulatory function of the intellect in relation to the actualized properties increases.

Key words: intelligence, will-power, adaptation, personality.

РЕЗЮМЕ

КОРРЕЛЯЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ ИНТЕЛЛЕКТА И ВОЛИ НА РАЗНЫХ ЭТАПАХ РАЗВИТИЯ ЛИЧНОСТИ

АВАГЯН А.

Цель статьи - выявить особенности соотношения интеллекта и силы воли на разных этапах развития личности. В статье представлени результаты исследования взаимосвязи интеллекта и воли в трех стадиях развития личности. Проведен корреляционный анализ, в резултате чего получены значимые связи сведетельствующие о сложных взаимосвязях между интеллектуальными характеристиками и силой воли.

Было обнаружено, что интеллект выполняет регулирующую функцию силы воли. На разных этапах развития личностьи, в зависимости от проблем, сила воли становится более актуальной, а регуляторная функция интеллекта по отношению к реализуемым свойствам возрастает.

Ключевые слова: интеллект, сила воли, адаптация, личность.